ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

0010, ՀՀ, ք.Երևան, Զաքյան 7-2 info@advocates.am

N 01/01/48-20

14.01.2020թ.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի
Պետական-իրավական հարցերի
մշտական հանձնաժողովի նախագահ՝
պարոն Վլադիմիր Վարդանյանին

Հարգելի՛ պարոն Վարդանյան,

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Գևորգ Պետրոսյանի, Նորա Առուստամյանի, Իվետա Տոնոյանի, Արայիկ Աղաբաբյանի, Հրանտ Մադաթյանի և Ջանիբեկ Հայրապետյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումկատարելու մասին» օրենքի նախագծով (**այսուհետ՝ Նախագիծ**) *առաջարկվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել 4-րդ կետով, լրացնելով դատարանում որպես ներկայացուցիչ հանդես գալու իրավունք ունեցող անձանց շրջանակը: Մասնավորապես, առաջարկվում է նման իրավունք ընձեռել նաև բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող ցանկացած գործունակ քաղաքացուն, ով ունի առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:*

Որպես առաջարկվող լրացման հիմնավորում նշվել է անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի ապահովման, ինչպես նաև այդ իրավունքի իրականացման շրջանակի ընդլայնման անհրաժեշտությունը:

Նշված նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարությունը ներկայացրել է բացասական եզրակացություն:

Առաջարկվող կարգավորումն ընդունելի չէ և գտնում ենք, որ այն ոչ միայն չի ծառայելու վերոնշյալ նպատակին, այլ ճիշտ հակառակը՝ հանգեցնելու է իրավաբանական օգնության որակի նվազմանը, հետևյալ պատճառաբանությամբ.

Նախ և առաջ հարկ ենք համարում արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի գործող կարգավորումը նպատակ է հետապնդում **ամրապնդելու Հայաստանի Հանրապետությունում որակյալ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրականացման երաշխիքները՝ ստեղծելու անհրաժեշտ իրավական նախադրյալներ անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար, ինչպես նաև բխում է դատարան դիմելու իրավունքի երաշխավորման և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցներ և պայմաններ ստեղծելու պետության պոզիտիվ պարտականությունից:**

Այլ կերպ ասած, պետությունը, նախատեսելով քաղաքացիական գործերով դատական ներկայացուցչության իրականացման ձևով իրավաբանական օգնություն ստանալու[1] հնարավորությունը միայն փաստաբանի միջոցով և սահմանափակելով այլ անձանց (ոչ փաստաբանների) կողմից դատական ներկայացուցչության իրականացման հնարավորությունը, նպատակադրված է ապահովելու և երաշխավորելու անձի դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի պատշաճ իրացումը:

Ընդ որում, հարկ է նկատել, որ քաղաքացիական գործերով դատական ներկայացուցչության իրականացման հնարավորության սահմանափակումը օրենսդրի կողմից միայն փաստաբանի միջոցով բացարձակ չէ:

Այսպես, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«3. Սույն հոդվածով նախատեսված դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն կարող է իրականացնել միայն փաստաբանը, բացառությամբ՝

1) մերձավոր ազգականի, այդ թվում՝ ծնողի, զավակի, որդեգրողի, որդեգրվածի, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբոր կամ քրոջ, պապի, տատի, թոռան, ինչպես նաև ամուսնու կամ ամուսնու ծնողի, փեսայի կամ հարսի համար անվճար ներկայացուցչություն իրականացնելու դեպքերի.

---

[1] Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի մասին մանրամասն կխոսվի ստորև:

2) մերձավոր ազգականին (ազգականներին) կանոնադրական կապիտալի կեսից ավելի բաժնեմասերը պատկանող իրավաբանական անձի շահերը դատարանում ներկայացնելու դեպքերի:»:

Նշված հոդվածից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է բացառություններ փաստաբանի միջոցով դատական ներկայացուցչության իրականացման հնարավորության հարցում:

Մասնավորապես, դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը այլ անձի (ոչ փաստաբանի) կողմից թույլատրվում է, եթե այն՝

ա) պարբերաբար մատուցվող ծառայություն չէ, կամ

բ) վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն չէ, կամ

գ) ուղղված է մերձավոր ազգականի համար անվճար ներկայացուցչություն իրականացնելուն, կամ

դ) ուղղված է մերձավոր ազգականին (ազգականներին) կանոնադրական կապիտալի կեսից ավելի բաժնեմասերը պատկանող իրավաբանական անձի շահերը դատարանում ներկայացնելուն:

Իրավաբանական անձանց աշխատակիցներին նույնպես թույլատրված է ներկայացնել գործատու կազմակերպության շահերը դատարանում:

Նշված բացառությունների սահմանումը պետության կողմից նպատակ ունի թույլատրել քաղաքացուն բացառիկ՝ օրենքով նախատեսված վերը նշված դեպքերում օգտվել այլ անձի ծառայություններից և պարտադրված չլինել անպայման դիմելու փաստաբանի օգնությանը՝ դրանով իսկ ապահովելով դատական ներկայացուցչության ձևով իրավաբանական օգնություն ստանալու ազատությունը և միաժամանակ սահմանափակելով դատական ներկայացուցչություն իրականացնող անձի կողմից այդ գործունեությունը որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով իրականացնելու հնարավորությունը: Ընդ որում, նույնպիսի իրավական կարգավորումներ են գործում նաև բազմաթիվ զարգացած եվրոպական երկրներում, որոնց մասին կխոսվի **սույն կարծիքի «բ» կետում**:

ա) Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացման մասով (ՀՀ Սահմանադրություն, հոդված 64)

ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. *Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին*:

Անձի իրավաբանական օգնություն ստանալու հնարավորությունը որևէ կերպ

սահմանափակված չէ: Իրավաբանական օգնություն կարող է ստանալ ցանկացած անձ, ցանկացած հարցի կապակցությամբ՝ անկախ նրա կարգավիճակից, գործունեության ոլորտից, իրավահարաբերության բնույթից, պետական գործունեության տեսակից, ընթացակարգի առանձնահատկություններից և այլն: Պետությունը պարտավոր է ապահովել **արդյունավետ ընթացակարգեր և ճկուն կառուցակարգեր,** որոնք յուրաքանչյուրի համար կապահովեն իրավաբանական օգնության արդյունավետ և հավասար հասանելիությունը՝ անկախ որևէ հանգամանքից[1]:

ՀՀ սահմանադրական դատարանը 08.10.2008թ. ՍԴՈ-765 որոշման 14-րդ կետում հստակ ընդգծել է. «...ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 1-ին մասի ընկալմամբ՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ներառում է, նախ՝ **որակյալ իրավաբանական ծառայություն ստանալու հնարավորությունը,** երկրորդ՝ **պետության պարտավորությունը՝ որակյալ իրավաբանական օգնություն ստանալու հնարավորություն ապահովելու բոլոր նրանց համար,** ովքեր ի վիճակի չեն ինքնուրույն ստանալ այդպիսի օգնություն: Պետության նշված պարտավորությունը ենթադրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ անհրաժեշտ է փաստաբանի պարտադիր ներկայացուցչություն կամ այն բխում է դատավարության շահերից, յուրաքանչյուր կարիքավոր պետք է իրավունք ունենա ստանալու իրավաբանական որակյալ օգնություն: Դա բխում է արդարադատության իրականացման բնագավառում իրավաբանական ծառայության մատուցման եվրոպական փորձից, ինչպես նաև իրավաբանների և իրավաբանական ծառայության մատչելիության վերաբերյալ ՄԱԿ-ի շրջանակներում ընդունված սկզբունքներից»: (**ընդգծումը մերն է՝ ՓՊ**):

Այսինքն՝ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածով, համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման, ամրագրվել է պետության պոզիտիվ պարտականությունը գործուն ընթացակարգեր, երաշխիքներ և մեխանիզմներ սահմանելու անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացումն ապահովելու համար, և որ այդ օգնությունը պետք է լինի **որակյալ:**

Ավելին, ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով, փաստորեն, պետությունն իր՝ անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացման պոզիտիվ պարտականության ապահովումը դիտարկում է բացառապես փաստաբանության գործունեության միջոցով:

Սահմանադրական նշված նորմի համաձայն՝ ***Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության,***

---

[1] ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ, Գ. *Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ,* Երևան, 2010, էջ 237:

ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:

Սահմանադրության նշված դրույթն ինքնանպատակ չէ. անձի իրավաբանական օգնություն ստանալու օբյեկտիվ պահանջն անհրաժեշտություն է դարձնում ոչ միայն նշված իրավունքի ամրագրումը, այլև դրա իրականացման երաշխիքների սահմանումը: Սահմանադրությամբ երաշխավորվող այս իրավունքի էությունից և բնույթից բխում է, որ **այն պետք է բավարարի համընդհանուր ճանաչում ստացած չափանիշները,** քանզի պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: **Սա նշանակում է, որ երաշխավորվող իրավաբանական օգնությունը պետք է լինի որակյալ,** այսինքն՝ տրամադրվի բարձր որակավորում ունեցող մասնագետի կողմից և ապահովի անձի իրավունքների և օրինական շահերի պատշաճ պաշտպանությունը կամ խախտված իրավունքների վերականգնումը համապատասխան ոլորտում: Իրավաբանական օգնության որակյալ լինելն ընդգծում է պետության կողմից երաշխավորվող իրավունքի նշանակությունը: Անձին որակյալ իրավաբանական օգնություն ցույց տալը կարևորվում է այն հանգամանքով, որ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրականացումը ու դրանց իրական պաշտպանությունն ամբողջ ծավալով հնարավոր է միայն այն դեպքում, երբ արվում է օրենքների հստակ իմացությամբ և դրանց պահանջներին համապատասխան[1]:

Հետևաբար, այս իրավունքը չի կարող իրականացվել ամեն մի անձի կողմից: Դրա համար անհրաժեշտ է ոչ միայն օրենքները և այլ իրավական ակտերը կարդալու ունակություն, **այլև դրանք ճիշտ հասկանալու ու մեկնաբանելու հմտություն**: Որոշակի հարցի լուծման համար անհրաժեշտ իրավական ակտի արագ հայտնաբերումը, դրա կիրառման ոլորտը որոշելը, իրավապահ և այլ մարմիններում գործեր վարելը պահանջում են իրավական կարգավորման հարցերում կողմնորոշվելու հատուկ գիտելիքների առկայություն: Այլ կերպ ասած՝ դրա համար անհրաժեշտ է, որ իրավաբանական օգնությունը ցույց տրվի ձեռնհաս անձի՝ մասնագետի կողմից: **Որպես այդպիսին Հայաստանի Հանրապետությունում հանդես են գալիս այդ նպատակով հատուկ ստեղծված կառույցի (փաստաբանության) ներկայացուցիչները՝ փաստաբանները: Դա է պատճառը, որ, փաստորեն, անձի՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, պետությունը Սահմանադրության ուժով կապում է փաստաբանական**

---

[1] ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, *Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ,* Երևան, 2010, էջեր 238-239:

գործունեության հետ:

Իհարկե, դա չի նշանակում, որ փաստաբաններից բացի այլ անձինք չեն կարող իրավաբանական օգնություն ցույց տալ: Սակայն, քանի որ պետությունը երաշխավորում է իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը և պատասխանատու է դրա **պատշաճ որակի համար**, ապա պարտավոր է ապահովել որակյալ, անհրաժեշտ մասնագիտական հմտություններ ունեցող իրավաբանների պատրաստման պայմանները, ինչպես նաև սահմանել փաստաբաններին ներկայացվող մասնագիտական և բարոյական պահանջներն ու չափանիշները: Նման կառուցակարգերի միջոցով պետությունն իրացնում է ոչ միայն մարդու իրավունքների իրականացումն ապահովող երաշխիքների ամրագրման իր առաջնակարգ գործառույթը, այլև ընդգծում է համապատասխան նպատակի նվաճման գործում իր պատասխանատվությունը[1]:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում տեղ գտած կարգավորումը, առաջին հերթին որակյալ իրավաբանական օգնություն ստանալու հնարավորությունը նախատեսող այն իրավական հիմքն ու նախադրյալն է, որով պետությունը կատարում էր իր պոզիտիվ պարականությունը ապահովելու քննարկվող հիմնական սահմանադրական իրավունքի իրացման երաշխիքները:

Կարևոր է նաև ընդգծել, որ ոչ որակյալ իրավաբանական օգնությունից տուժում է ոչ միայն տվյալ քաղաքացին, այլ նաև արդարադատությունը և պետության իրավակարգն ընդհանրապես:

Պետության կողմից սահմանված օրենսդրական միջոցներն ու իրավական կառուցակարգերը, որոնցով օրենսդիրն ուղղակի կամ անուղղակի կերպով նպատակ է հետապնդում ապահովել որակյալ իրավաբանական օգնություն՝ տարբերակելով փաստաբան հանդիսացող և փաստաբան չհանդիսացող անձանց, ի թիվս այլոց, հետևյալներն են.

- ՀՀ փաստաբանական դպրոցի նախատեսումը և ստեղծումը,
- ՀՀ փաստաբանական դպրոցի ընդունելության ընթացակարգերը,
- փաստաբանների որակավորման, արտոնագրման և վերապատրաստման ընթացակարգերը,
- փաստաբանների վարքագծի կանոնների սամանումը, կարգապահական պատասխանատվության միջոցները,
- փաստաբանի գործունեության երաշխիքները,
- փաստաբանի՝ փաստաթղթերի և տեղեկատվական կրիչների անձեռնմխելիությունը,

[1] Տե՛ս նույն տեղում:

- փաստաբանի արտոնագիրը դադարեցնելու, այն կասեցնելու մեխանիզմները,
- հանրային պաշտպանի ինստիտուտը և այլն:

Բնականաբար, վերը թվարկված կառուցակարգերը վերաբերում են միայն փաստաբաններին. փաստաբան չհանդիսացող անձանց վրա դրանք չեն տարածվում: Ոչ փաստաբան իրավապաշտպանները չեն օգտվում փաստաբանական գործունեության երաշխիքներից և փաստաբանի իրավունքներից, կաշկանդված չեն փաստաբանի վարքագծի կանոնագրքով, փաստաբանի պարտականություններով և պատասխանատվությամբ:

Եթե դատական ներկայացուցչությունը թույլատրվի փաստաբան չհանդիսացող այլ անձանց ևս, կստացվի, որ վերջիններս կարող են, օրինակ, թույլ տալ փաստաբանի համար կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող խախտումներ (օրինակ՝ ի վնաս իր վստահորդի տեղեկություններ փոխանցել հակառակորդ կողմին) և չենթարկվել կարգապահական պատասխանատվության, քանի որ փաստաբան չեն՝ շարունակելով իրենց անվերահսկելի իրավապաշտպան գործունեությունը: Այդպիսի վիճակն անթույլատրելի է առնվազն անձի որակյալ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի երաշխավորման տեսանկյունից, ինչպես նաև չի բխի արդարադատության շահից:

Ինչ վերաբերում է Նախագծի հիմնավորումներում տեղ գտած այն հիմնավորմանը, որ անձի ներկայացուցչի փաստաբան հանդիսանալը, ի տարբերություն քաղաքացիական դատավարության, պարտադիր չէ վարչական դատարանում, ապա այն ևս ընդունելի չէ, քանի որ վարչական դատարանը գործի քննությունն իրականացնում է **ի պաշտոնե** (ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, հոդված 5): Այսինքն, վարչական դատարանը կաշկանդված չէ կողմերի ներկայացրած ապացույցներով և փաստերով և կարող է ճշմարտությունը բացահայտելու նպատակով սեփական նախաձեռնությամբ քայլեր ձեռնարկել:

բ) Միջազգային և օտարերկրյա իրավական կարգավորումներ

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն 2000թ. հոկտեմբերի 25-ին հաստատել է փաստաբանի մասնագիտության ազատության մասին հանձնարարականը: Այդ փաստաթղթով, ի նկատի ունենալով Եվրոպական կոնվենցիայի դրույթները և Միավորված Ազգերի Կազմակերպության կողմից հաստատված Իրավաբանների դերին վերաբերող սկզբունքները և ընդգծելով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության գործում

փաստաբանների և նրանց միավորումների հիմնարար դերը, նպատակ ունենալով ապահովել փաստաբանական մասնագիտական գործունեության ազատությունը օրինականության ամրապնդման նկատառումներով՝ Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների կառավարություններին առաջարկվում է, կախված իրավիճակից և հանգամանքներից, ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ այն սկզբունքների իրականացման ուղղությամբ, որոնք նախատեսված են այդ հանձնարարականով:

Ընդ որում, ԵԽ նշված հանձնարարականը, ի թիվս այլ սկզբունքների, անդամ պետություններից պահանջում է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները անձի՝ **անկախ փաստաբանների կողմից արդյունավետ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովման ուղղությամբ** (սկզբունք 4)[1]**:**

2012թ. մայիսին «Եվրոպական Միության Արևելյան Գործընկերություն – Արևելյան գործընկերության երկրներում իրավական բարեփոխումներում համագործակցություն» ծրագրի շրջանակներում «Մասնագիտացված դատական համակարգեր» աշխատանքային խմբի կողմից կազմվել է զեկույց (**այսուհետ՝ նաև Զեկույց**) փաստաբանի մասնագիտության վերաբերյալ[2]:

Զեկույցի 20-րդ էջում վերլուծվել է փաստաբանների մենաշնորհը իրավական ծառայությունների շուկայում: Նշված գլխի ներածության մեջ նշվել է՝ «*Սույն գլխի խնդիրը հանդիսանում է նրանում, որ լուսավորել փաստաբանների իրավական ծառայությունների մենաշնորհի խնդիրը արևելյան գործընկերության երկրների շուկայում: Այնպիսի հարցեր, ինչպիսիք են դատավարական իրավունքները և անվճար իրավական ծառայությունների մատուցումը՝ չեն վերլուծվելու: Մենաշնորհը իրավական ծառայությունների շուկայում կարող է տարածվել դատական ներկայացուցչության, և իրավական խորհրդատվության տրամադրման վրա:* ***Անհրաժեշտ է նշել, որ վարչական գործերով փորձը շատ տարբեր է, այդ պատճառով որոշվել է սահմանափակվել փորձի վերլուծությամբ՝ քաղաքացիական և քրեական գործերով****:*[3]»:

Զեկույցի 23-րդ էջում անդրադարձ է կատարվել Հայաստանում փաստաբանների մենաշնորհին[4]՝

---

[1] Տե՛ս Рекомендация № Rec(2000)21 Комитета министров о свободе осуществления профессии адвоката:

[2] Рабочая группа «Профессиональные судебные системы» – Доклад «Профессия адвоката» / Совместная программа Европейского Союза и Совета Европы «Восточное партнерство – Содействие правовой реформе в странах Восточного партнерства». Генеральная дирекция по вопросам прав человека и верховенства права. – Страсбург, май 2012, 318 էջ:
http://www.coe.int/t/dghl/cooperation/capacitybuilding/source/judic_reform/RU%20Profession%20of%20Lawyers_Russian_Final%20version.pdf

[3] ընդգծում մերն է՝ ՓՊ

[4] Մեր կարծիքով մենաշնորհ բառի փոխարեն առավել ճիշտ կգործածվի «բացառիկություն» եզրույթը

«Փաստաբանները Հայաստանում չունեն մենաշնորհ խորհրդատվություն տրամադրելու հարցում, այլ միայն ներկայացուցչությանը դատարանում: Փաստաբանության մասին օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է, որ «ներկայացուցչությունը դատարաններում կամ պաշտպանությունը քրեական գործերով, ինչպես ձեռնարկատիրական գործունեություն, պետք է իրականացվի միայն փաստաբանների կողմից»: Հայաստանում, փաստաբանության մասին օրենքը նախատեսում է նաև, որ «միայն փաստաբանը կարող է ապահովել պաշպանությունը քրեական գործերով դատավարությունում» (կետ 4 հոդված 5 Հայաստանի Հանրապետության օրենքը «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին):

Եզրակացություններ և առաջարկություններ

Փաստաբանները Հայաստանում չունեն մենաշնորհ խորհրդատվություն տրամադրելու հարցում, սակայն փաստաբանները իսկապես զբաղեցնում են մենաշնորհ դիրք նրանում, ինչը վերաբերվում է դատական ներկայացուցչություններին, այդ թվում՝ քրեական գործերով: ***<u>Դա համապատասխանում է առաջատար եվրոպական փորձին[1]:</u>***»:

Ինչպես պարզ է դառնում զեկույցից, Հայաստանում քաղաքացիական և քրեական գործերով փաստաբանի մենաշնորհը համապատասխանում է առաջատար եվրոպական փորձին:

Ըստ զեկույցի՝ նման տարբերակման հիմքում դրված է **իրավաբանական օգնության որակի** խնդիրը: Այն պետք է լինի **իրական և արդյունավետ:**

*****

Ստորև ներկայացվում են տեղեկություններ տարբեր երկրներում քաղաքացիական գործերով **դատական ներկայացուցչությունը** միայն փաստաբանների կողմից իրականացնելու վերաբերյալ:

<u>Ֆրանսիա</u>

Ֆրանսիայի Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ *Կողմերը կարող են դատարանում հանդես գալ անձամբ, բացառությամբ այն գործերի, որտեղ փաստաբանի կողմից ներկայացուցչությունը պարտադիր է:*

[1] ընդգծում մերն է՝ ՓՊ

Գերմանիա

Գերմանիայի Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի համաձայն՝ *Կողմերը փարաձքային դատարաններում և մարզային բարձր դատարաններում պետք է ներկայացված լինեն փաստաբանների միջոցով: Կողմերը արդարադատության ֆեդերալ դատարանում պետք է ներկայացված լինեն այդ դատարանում ներկայացուցչություն իրականացնելու իրավասություն ունեցող փաստաբանի միջոցով:*

Բելգիա

Բելգիայի Դատական օրենսգրքի 440 հոդվածի համաձայն, *Դատարանում ներկայացուցչություն իրականացնելու իրավասություն ունեն միայն փաստաբանները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:*

Լիտվա

Լիտվայի Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածը սահմանում է դատարանում որպես լիազորված անձ հանդես եկող անձանց ցանկը: Դրանք են՝

1) Փաստաբանները,
2) Փաստաբանների օգնականները, որոնք ունեն իրենց վերահսկող փաստաբանի կողմից գրավոր համաձայնություն կոնկրետ գործով մասնակցելու վերաբերյալ,
3) Հայցվորներից մեկը մյուս հայցվորների կողմից լիազորվելու դեպքում,
4) Բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող անձինք, եթե նրանք ներկայացնելու են իրենց մերձավոր ազգականների կամ ամուսնու շահերը,
5) Առևտրային միությունները, այն դեպքում, երբ նրանք ներկայացնում են իրենց անդամների շահերը աշխատանքային վեճերով:

Օրենսգիրքը սահմանում է նաև, որ այլ անձինք նույնպես կարող են ներկայացուցչություն իրականացնել, եթե գործում են փաստաբանների կամ փաստաբանների օգնականների հետ միասին:

Մոլդովա

Մոլդովայի Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *ֆիզիկական անձինք քաղաքացիական գործերով կարող են պաշտպանել իրենց շահերը անձամբ, փաստաբանի կամ փաստաբանի փորձնակի միջոցով:*

Բուլղարիա

Բուլղարիայում բացի փաստաբաններից, դատական ներկայացուցչություն կարող են իրականացնել ամուսինը, ծնողները, չափահաս երեխաները:

Խորվաթիա

Խորվաթիայում քաղաքացիական գործերով դատական ներկայացուցչություն կարող են իրականացնել միայն փաստաբանները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Դատական ներկայացուցչություն կարող է իրականացնել նաև արյունակից ազգականը, ինչպես նաև ամուսինը:

Նորվեգիա

Նորվեգիայում Գերագույն դատարանում ներկայացուցչություն իրականացնում են միայն փաստաբանները, այն էլ նրանք, ովքեր լիազորված են հանդես գալու Գերագույն դատարանի առաջ: Ստորադաս դատարաններում դատական ներկայացուցչություն իրականացնում են փաստաբանները: Դատարանները, որոշակի հանգամանքներից ելնելով, կարող են թույլատրել կոնկրետ գործով

դատական ներկայացուցչություն իրականացնել նաև ոչ փաստաբանի կողմից: Նշված թույլտվությունների քանակը շատ փոքր է[1]:

Սերբիա

Սերբիայում քաղաքացիական գործերով ֆիզիկական անձանց կարող են ներկայացնել փաստաբանները:

Իսպանիա

Իսպանիայում քաղաքացիական գործերով դատական ներկայացուցչությունը վերապահված է փաստաբաններին:

Ավելին, նշված զեկույցի հեղինակների կողմից կատարված հետազոտությունների, բազմաթիվ զարգացած եվրոպական երկրներ որդեգրել են այն մոտեցումը, որ թե՛ դատական ներկայացուցչության, թե՛ իրավաբանական խորհրդատվության ձևով իրավաբանական օգնություն տրամադրելու իրավունքը բացառապես փաստաբանների մենաշնորհն է **(Ավստրիա, Կիպրոս, Չեխիա, Գերմանիա, Վենգրիա):**

Այսպիսով, դատական ներկայացուցչությունը քաղաքացիական դատավարությունում միայն փաստաբանի մենաշնորհային գործունեություն նախատեսելը ՀՀ օրենսդրությամբ համապատասխանում է զարգացած երկրներում ընդունված իրավակարգավորումներին և համընդհանուր ճանաչում ստացած միջազգային չափանիշներին ու սկզբունքներին:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Ազգային ժողովի պատգամավորներ Գևորգ Պետրոսյանի, Նորա Առուստամյանի, Իվետա Տոնոյանի, Արայիկ Աղաբաբյանի, Հրանտ Մադաթյանի և Ջանիբեկ Հայրապետյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումկատարելու մասին» օրենքի նախագիծը չի կարելի ընդունել, իսկ դատական ներկայացուցչությունը քաղաքացիական դատավարությունում միայն փաստաբանի բացառիկ գործունեություն նախատեսելը բխում է որակյալ իրավաբանական օգնություն ստանալու

[1] Տե՛ս «European Judicial Systems, Efficiency and quality of Justice», Council of Europe, SEPEJ Studies No 20, 2014 (2012 data), page 391

Սահմանադրական երաշխիքից և համապատասխանում է առաջատար եվրոպական փորձին:

Հարգանքով՝

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ
Արա Զոհրաբյան